

**ԹՈՂՈՉՈՒ ՏՂԵՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք
(Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Ըլում են, չեն ըլում՝ մի մարդ, մի կնիկ. սրանք ունենում են մի միևնուճար տղա: Էս մարդը թոռչի ա ըլում:

Եր որ հերը¹ մեռնելիս ա ըլում, կնգանն ասում ա. — Ա՛ կնիկ, չըլնիմ-չիմանամ, որ դու մեր տղին իմ փեշակին տաս. ես հարիր տարի չըչարվեցա՝ ի՞նչ դադեցի, որ նա ի՛նչ դադի. թող գնա, մի ուրիշ փեշակ սվորի, իր արևի ձենն ածե, ես ինչ էլա, էլա՛, հալբաթ էս էր գրած ձկատիս:

Տղեն վենձանում ա, դառնում տաս-տասնհինգ տարեկան տղա: Մի օր մեր ու տղա իրար հետ քաղաքն են գնում: Բզարումը ման գալիս էս տղի աչքովը մի թոռ ա ընգնում: Թոռը շատ ա դիր գալիս տղին: Նա ընգնում ա մոր ոտներին դաչում, պղատում, որ էդ թոռն իր հմար առնու:

— Չէ՛, չէ՛, որդի,— ասում ա մերը,— ըլիլ չի, քու հերը մեռնելիս վասիաթ ա արել, երկաթե լուծը դրել շընքիս, որ քե հմար թոռ չի առնում, որ քե թոռչութենի չի տամ:

— Չէ՛, մերա, չէ՛. պետք ա էդ թոռն առնուս ինձ մըհար,— ասում ա տղեն, ընգնում մոր ոտները:— Թե կառնուս՝ է՛դ թոռն ա, թե առնուլ չես՝ է՛դ թոռն ա, — ասում ա ու դայիմ բռնում թոռիցը: Մերը տենում ա, որ տղի ձեռիցը կարում չի պրծնուլ, փող ա տալի ու էն թոռն առնում: Տղեն թոռը շլակում ա ու ուրախ-ուրախ տուն գալիս:

Էգսի օրը տղեն թոռը վերառնում գնում ջուրը՝ ձուգը բռնելու: Իրեք հետ բեսին խեչահանում ա ու աստոծ կանչում, թոռը ջուրը գձում: Հենց որ տենում ա՝ թոռը բան ա ընգել, ալախ-մալախ դուրս ա հանում թոռը, տենում որ միջինը մի գորդն ա: Գորդը թոռիցը հանում ա ու ջուրը գձում, փոխփոշիման թոռը ջուրը գձում: Թոռը քաշում ա դուս վրա երկու դոնումն՝ էլի էն գորդն ա ըլում թոռումը: Տղեն էլ էդ ջուրն ա գձում գորդն ու փոխփոշիման թոռը ջուրը գձում: Վրա իրեք դոնումն ա թոռը դուս քաշում, վրա իրեք դոնումն էլ գորդն ա ընգնում թոռը: Տղեն էս դոնումը գորդը ջուրը չի գձում. «Աղբե՛ր, ձուգը չի ընկնում, էլ ինչի՞ եմ ջուրը գձում գորդը, բալքա սա ա իմ դամաթը»:

Տղեն վեր ա ունում գորդն ու տուն բերում: Գորգը վեր ա գձում հեռու դռան տակին, ու ինքը գալիս ա նստում կրակի կշտին: Մերը ըիգնաժամիցը տուն ա գալիս, տենում, որ տղեն ունքերը կիտած, մոռթը կախ արած, օջախի դրաղին նստած ա:

— Ի՞նչ ես ունքերդ կիտել, ո՛րդի, հիվանդ խու չե՞ս,— հարցնում ա մերը, եր տենում ա, որ տղեն փռշիման նստած ա:

— Ո՞նց չի ունքերս կիտեմ, ա՛յ մերա,— ասում ա տղեն,— էսօր ռավոտեն դեսը թոռ եմ գձում, մի հատ գորդն ա բռնածս:

— Ո՛չինչ չի կա, ո՛րդի, ի՞նչի ես դարդ անում, աստոծ էդ ա դրգել՝ էդ ես բռնել, դու ի՞նչ անես, հալբաթ էդ ա քու դամաթը:

Ռավոտը վեր են կենում, տղեն հանդն ա գնում, մերը գնում ա ժամը: Գալիս են տենում ջուրը բերած, տունն ավլած, դուս ու տուն վեքադած, ամաննին լվացած, խորակն էփած, շորերը գձած... ամեն բան սարքին ու կարգին. հմա ինչ դդար փիքը են անում, միտք անում, գլխի չեն ընգնում:

Էլի են դուրս գնում մեր ու տղա, էլեդ գալիս են տենում, որ ռաչվա նման ջուրը բերած, տունն ավլած, դուս ու տուն վեքադած, ամաննին լվացած, խորակն էփած, շորերը գձած, ամեն բան սարքին ու կարգին:

1 Խոսքը տղայի հոր մասին է—Ծ. Կ. :

— Ա՛յ, մերա,— ասում ա տղեն մորը,— բէ ես դռան տակին բուսու պիւն, տենամ՝ էս ո՞վ ա գալիս մեր տունը սարքն ու կարգը գձում:

Մերը գնում ա ժամը, տղեն մտնում ա դռան քամակն ու բուսու պիւն: Քիչ ա կենում, թէ շատ, հլէ մին էլ էնա տենում, որ քնջնիցը դուրս էկավ իր բռնած գորդն ու հուշկի-հուշկի անելով մոտեցավ օջախին: Մի քիչ դէս ու դէն մտիկ արավ, տեհավ որ օքմին չիկա տանը, մին կոր՝ ռաց՝ դառավ մի հավի դդար, մին էլ կոր՝ ռաց՝ դառավ մի ոչխարի դդար, մին էլ որ կոր՝ ռաց՝ տրաքվեց ու միջիցը մի ախչիկ դուս էկավ. էնէ՛նց սիրուն, որ ո՛նչ լաված էր, ո՛նչ տեհնված: Որ տենէիր, կոսէիր, ո՛նչ ուտեմ, ո՛նչ խմեմ, գշեր-ցերեկ նրա շիմշատ բոյուն մտիկ անեմ:

Էդ ախչիկը տեղը վեր ա քաղում, ավիլը վեր ունում՝ տունն ու դուռը ավում, ջուր բերում, ամաննին լվանում, թերեքնին սրբոտում, օջախի չորսի կուռը ջրջրահանում, խորակն էփում: Հենց ուզում ա, որ տանի ավիլը դնէ դռան տակին, տենում ա տղեն էնդի պագած: Փախչում ա, վեր ունում իր խէշը, որ հագնու: Տղեն վրա ա վագում ու բռնում: Գորդն դաչում ա, պղատում ա, որ իրան բաց թողու, տղեն թողնում չի: Վեր ա կալնում ու գորդան խէշը կրակը գձում, որ էլ նա հագնու ոչ:

Մերը ժամիցը գալիս ա տուն, տենում, որ տղեն օջախի դրաղին նստած ա, նրա կշտին էլ մի ախչիկ, էնէ՛նց սիրուն, որ ես ախչիկ ասեմ, դու հյուրի-մալաք իմացիր: Նրա բեսի շողքը պատերոքն ա ընգած ըլում: Մերը եր իմանում ա, որ ախչիկը գորդան միջիցն ա դուս եկե, շատ ուրխանում ա: Տղին պսակում ա դրա հետ ու թգավորի պես ապրում են:

Դրանք մի հրևան են ունենում, մի պառավ ա ըլում: Դա վեր ա կենում գնում թգավորի կուշտն ու ասում. — Թգավորն ապրած կենա, բաս չէ՞ս ասիլ՝ փլան-փլան տեղը մի մեր ու մի տղա են ապրում, նրանք մի թգավորի լայաղ հարսն ունին. ինձ դոշուն տո՛ւ, գնամ քե հմա բերեմ:

Էս պառավը հետը վեր ա ունում էն դդար դոշուն, որ մերին ին գնացել՝ մերին կչորաներ, որ ծովի վրեն ին գնացել ծովը կցմաքեր: Ախչիկը թուրը վեկալած ընգնում ա դոշունի մեջն ու մի սհաթումը չիմնու գլուխն էլ տալի՝ մնին սաղ թողնում, որ գնա խաբարը տանի թգավորին: Թգավորն ուզենալիս է ըլում պառավի գլուխը տա, պառավն ասում ա. — Էրկու էն դդար դոշուն տո՛ւ, հմի բերեմ:

Թգավորն էրկու էնդդար դոշուն ա տալիս պռավին, որ գնա էն ախչկանը բերե: Ախչիկը թուրը վեկալած ընգնում ա դոշունի մեջը, չիմնու գլուխն էլ տալիս ա. մնին սաղ թողնում ա, որ գնա թգավորին խաբարը տանի: Թգավորը կանչում ա էս պռավին իր կուշտը, որ գլուխը տա, թէ զուր տեղը նրա դոշունը փչացրել ա:

Պառավն ասում ա. — Թգավորն ապրած կենա, դու էն տղին կանչե քու կուշտն ու նրան ասա, որ գնա Օխտը սարի քմակիցը Դըռխանասին բերե: Թէ որ կարենա ոչ բերե՝ գլուխը տալ տու ու կնգանը քե վե կալ:

Թգավորը կանչում ա էս Թոռչու տղին, ասում, որ գնա Օխտը սարի քմակիցը Դըռխանասին բերե, թէ որ կարենա ոչ՝ գլուխը տա: Թգավորիցը իրեք օր միուլ ա ուզում Թոռչու տղեն:

Թգավորը նրան իրեք օր միուլ ա տալիս: Թոռչու տղեն գլուխ ա տալիս թգավորին ու թուշ դալիս տուն:

Բիզունը տղեն տուն ա գալիս ունքերը կիտած, լացակնքած նստում կրակի դրաղին:

Կնիկը հարցնում ա. — Ի՞նչ ասավ թգավորը, ի՞նչի ես ունքերդ կիտել:

— Ո՞նց չի կիտեմ ունքերս, էն որ թգավորն իր դոշունով կարում չի բերե, ինձ ասել ա, որ բերեմ իր հմա: Պետք ա գնամ Օխտը սարի քմակիցը բերեմ Դըռխանասին, թէ չէ՝ թգավորը գլուխս տալ պտի:

— Էգ դարդակ բանի հմա էլ ինչի՞ ես դարդ անում,— ասում ա կնիկը:— Գնա թգավորից օխտը բեռը բամբակ ուզե, օխտը բեռը քացախ ու արի:

Թոռչու տղեն նի ա հասնում թգավորի կուշտը, վեր ունում օխտը բեռը բամբակն ու օխտը բեռը քացախն ու գալիս տուն:

Կնիկն ասում ա.— Օխտն օր ճամփա կերթաս, ամեն օր մի սար անցկկենաս: Վրա Օխտը սարի դռնին կտենուս մի աղբուր, աղբրի ակը օխտը բեռը բամբակովը կկապես, աղբրի ջուրը դուս կոծես, օխտը բեռը քացախը կոծես մեջը: Ղրթխանասին կգա, կխմե, կհարբի, վրեն կնստիս կքշես, կերթաս թգավորի տունն ու իրան կտաս:

Թոռչու տղեն որ էս լսում ա, ունքերը նոր բացվում են, շատ ուրախանում ա. գնում ա թգավորի ամարաթը, օխտը բեռը բամբակ ու օխտը բեռը քացախ ուզում, ճամփա ընգնում²: Օրը մի սար անցկենալով՝ գնում հասնում ա վրա Օխտը սարին: Գնում ա աղբուրը, հմա որ Ղրթխանասու ոտնատեղերը տենում ա, վախիցը սիրտը փորիցը ընգնում ա: Ուց որ կնիկն ասել էր՝ օխտը բեռը բամբակով կալնում ա աղբրի ակը, ջուրը դուս ածում, քցախով լցնում աղբուրն, ու ինքը հեռու տապ անում: Շատ ա կենում, թե քիչ մընել տենում ա րևաց Ղրթխանասու գլուխը: Դեռ մի օրավար հեռու ոտնաձենը լսում ա: Ձին որ խրխնջում ա, սար ու ձոր լռտում են . . . Թոռչու տղեն վախվախելով ծառերի ճղքների միջիցը մտիկ ա անում: Որ ձիու պնչածակերիցը դուս եկող կրակը աչքին ա ընգնում, ուրի պես դողում ա ու լիզուն փորը գձում:

Ձին գալիս ա վրա ընգնում աղբրին ու խմում: Քանի խմում ա՝ ծրավում ա, քանի խմում ա՝ ծրավում ա. հնչվելը խմում ա, որ աղբրումն էլ քցախի կաթիլ չի մնում:

Ձին դնթոնում ա ու մնում տեղնուտեղը կանգնած: Թոռչու տղեն դուս ա գալի մերուցն ու նստում Ղրթխանասու վրա, ճամփա ընգնում դպա թգավորի ամարաթնին: Օխտն օրեն ճամփեն նա մի օրումն ա կտրում ու Ղրթխանասին տալի թգավորին:

Թգավորը տենում ա, որ խաբնով բան չի դուս գալիս՝ Թոռչու տղին կանչում ա ու ասում.— Յա՛ ինձ հմա մի սիրուն ախչիկ պտիս ճարել, յա՛ թե չե քու կնգանը պտիս բերել, թե չե՝ ու գլուխդ տալ կտամ:

Թոռչու տղեն բիզունը տուն ա գալիս ու ունքերը կիտած, սևսրտած կրակի դրաղին նստում: Կնիկը հարցնում ա.— Թգավորն ի՞նչ ասավ, ինչի՞ ես ունքերդ կիտել:

— Ո՞նց չի ունքերս կիտեմ,— ասում ա Թոռչու տղեն,— թգավորն ասել ա, որ յա՛ իր հմա իրա լայադ ախչիկ ճարեմ, յա՛ իմ կնգանս իրան տամ:

— Էդ դարդակ բանի հմա էլ ինչի՞ ես դարդ անում,— ասում ա կնիկը,— գնա թգավորիցը իր մատնութն էլ ուզե, մի լավ շո՛ւն էլ, մի փահլևան էլ, օխտը հատ էլ իմ ասած քոք որձեր ու արի, ես քե կոսեմ, թե ոնց պտիս ախչիկ ճարել:

Թոռչու տղեն գնում ա թգավորիցը նրա մատնութն էլա ուզում, մի շուն էլ, մի փահլևան էլ, օխտը քոք որձ էլ ու տուն գալիս: Կնիկը նրան սովորեցնում ա, թե որդի պտի գնալ, ինչ պտի անել, որ ախ չիկը բերե, ու ճամփու ա դնում:

Օխը որձերից մինը մորթում ա, ինքն ուտում ու դմակը տալի Շանը: Մինն էլ մորթում ա Փահլևանի հմա: Փահլևանը միսն ուտում ա, դմակը տալի Շանը: Գնում են, գնում, շատն ու քիչ աստոծ գիդե, ճամփին տենում են մի մարդ մի վենձ ջրի վրա ընգած խմում ա ու կանչում .

«Վա՛ յ ջուր, վա՛ յ ջուր, որ խմեմ, ծարավս հովանա»: Թոռչու տղեն ու Փահլևանը գովում են նրա իգիթությունը, որ սաղ ջուրը՝ ցմաքացնում ա ու դեռ «Վա՛ յ ջուր» կանչում:

— Էս ի՞նչ իգիթություն ա,— ասում ա,— իգիթը Թոռչու տղեն ա, որ ասում են՝ Օխտը սարի քմակիցը Ղրթխանասին բերել ա: Էդ ո՞ւր եք գնում, ինձ հետներուդ չե՞ք տանիլ:

2 Գործողության անհարկի կրկնությունը բանասացի մոռացության հետևանքով է-Օ. Կ. :

3 Այստեղ ջուր՝ գետ է նշանակում-Օ. Բ. :

— Երկու չի ըլինք, թող իրեք ըլինք, ընչի՞ չենք տանիլ:

Թոռչու տղեն մի որձ էլ Զուր ծծող իգիթի հմա ա մորթում: Նա միսն, ուտում ա, դմակը Շանը տալիս: Ճամփա են ընգնում, գնում:

Գնում են գնում, շատն ու քիչը աստոծ գիդե, տենում են մի ջաղաց՝ օխտն աչքանի: Տուն են մտնում, տենում, որ մի մարդ վեր եկող ալիքն ուտում ա ու միալար կանչում. «Վա՛յ հաց, վա՛յ հաց, ուտեմ՝ փոքս դինջանա»: Թոռչու տղեն գովում ա նրա իգիթութիւնը:

— Էս ի՞նչ իգիթութիւն ա,— ասում ա Ալիք ուտողը,— իգիթութիւնն էն ա, որ ասում են՝ Թոռչու տղեն Օխտը սարի քմակիցը Ղըռխանասին բերել ա: Բա դուք էդ ո՞ւր եք գնում, ինձ հետներուդ տանիլ չե՞ք:

— Ընչի՞ չենք տանիլ,— ասում ա Թոռչու տղեն,— իրեք չի ըլինք, թող չորս ըլինք:

Մի որձ էլ նրա հմա ա մորթում: Միսն ուտում են, դմակը Շանը տալիս ու ճամփա ընգնում:

Գնում են գնում, շատն ու քիչն աստոծ գիդե, տենում են երկու սար՝ իրեք օրավար մին մնուց հեռու: Մարերի գլխին կապած ա մի ճուպան՝ մեջը մի վենձ ջղացաքար անցկացրած: Մի սարի գլխին մի մարդ ա կանգնած, մեկելի գլխին՝ մինը: Սա մի ճկթով ջղցքարին տալիս ա՝ գնում ա նրա կուշտը, նա ճկթով ջղցքարին տալիս ա՝ գալիս ա սրա կուշտը:

Թոռչու տղեն գովում ա սրանց իգիթութիւնը:

— Էս ի՞նչ ի գիթութիւն ա,— ասում են նրանք,— իգիթութիւնն էն ա, որ ասում են՝ Թոռչու տղեն Օխտը սարի քմակիցը Ղըռխանասին բերել ա: Բա դուք էդ ո՞րդի եք գնում, մեզ հետներուդ վեր չեք ունի՞լ:

— Ընչի՞ չենք վեր ունիլ,— ասում ա Թոռչու տղեն,— չորս չի ըլինք, թող վեց ըլինք:

Նա երկու որձ ա մորթում, միսն ուտում են, դմակը տալիս Շանն ու ճամփա ընգնում:

Գնում են գնում, շատն ու քիչը աստոծ գիդե, տենում են մի ճամփու կշտի մի մարդ գլխի վրա ցից էլած: Հարցնում են, թե նա ինչ փեշակ ունի: Ասում ա, որ ինչ որ մարդիկ ըշխարումը խոսում են, նա գիդե, թե ի՞նչ են ասում, ո՞ւմ մասին են խոսում:

Թոռչու տղեն գովում ա նրա իգիթութիւնը:

— Էս ի՞նչ իգիթութիւն ա,— ասում ա Իմաստունը,— իգիթութիւնն էն ա, որ ասում են՝ Թոռչու տղեն Օխտը սարի քմակիցը Ղըռխանասին բերել ա: Բա դուք ո՞րդի եք գնում, ինձ հետներուդ տանիլ չե՞ք:

— Ընչի՞ չենք տանիլ,— ասում ա Թոռչու տղեն,— վեց չի ըլինք, թող օխտն ըլինք:

Մի որձ էլ էստի ա մորթում Թոռչու տղեն: Միսն ուտում են, դմակը Շանը տալիս ու ճամփա ընգնում:

Գնում են գնում, շատն ու քիչն աստոծ գիդե, հասնում են թգավորի ամարաթնուն: Գնում են նստում հրսնախոսի քարի վրեն: Նաղիր-վեգիրնին գալիս են հարցնում, թե ինչ մարդիկ են:

Թոռչու տղեն ասում ա, որ էն փլան-փլան թգավորի մարդիկն են, եկել են ախչիկ ուզող:

Թգավորը հարցնում ա, թե ինչ դղար ոսկի են բերել հետներան: Եր իմանում ա, որ մի հատ էլա ոսկի չունին, ասում ա թգավորը. «Հաց տվեք ուտեն, գնան, դրանք իմ լայաղ մարդիկ չեն, թե առանց ոսկու են եկել, դրանք կարալ չեն իմ ախչկանը պիտի»:

Նրանց հմա մի ընգնանի խորակ են եփում ու դնում առաջներուն: Ալիք ուտողն ասում ա. —

Հեչվելը ես համը տենամ ոչ, իմ աղեն կարալ չի ուտել:

Էս ասում ա ու ընգնանին աղաքը քաշում, մի շնչումը լավ լպզտորում, կլեկում ու դնում դրադը:

— Դե գնացեք մեկել ընգնանիքը բերեք. Էս մի պտառովը ես ո՞նց համը տենամ:

Գնում են ամեն մնի հմա օխտը ընգնանի խորակ եփում ու բերում:

Էգսի օրը թգավորն, եր լսում ա էր, շատ վախում ա: Էն դայդի դժվար բաներ ա ուզում նրանց աղաքը դնել, որ կարենան ոչ գլուխ բերել ու նրանցից յախա թափել: Նա ասում ա, որ մի շուն բերեն իր շան հետ կովելու:

Թոռչու տղեն դուս ա կանչում իր Շանը: Որ վրա ա գալիս թգավորի շան վրա, բդիցս բռնելն ու խեղդելը մին ա անում: Թգավորը մի փահլևան ա ուզում, որ իր փահլևանի հետ կոխ բռնել:

Թոռչու տղի Փահլևանը թգավորի փահլևանի ձեռք բռնում ա, որ հուպ ա տալիս, ձեռք ճոճում, փշրվում ա: Թգավորը, եր տեսնում ա, որ գոռով կարում չի նրանց հախիցր գալ, ուզում ա նրանց սատանութենով ջնջել: Հրաման ա տալիս, որ ջուրը կտրեն դպա նրանց օթախը, որ նրանք միջին խեղդվին: Ջուր ծծողը դունչը դնում ա դռանն ու մի դռնում հոռ անում, սաղ ջուրը ցմաքում ա: Թգավորի իլլաջը որ կտրում ա, նրանց խորակը դեղում ա, որ նրանց տա կտորել: Թոռչու տղեն մատնուքը դնում ա խորակի մեջը, տեսնում ա, որ դեղը ջգվեց: Խորակը դրաղ են դնում:

Թգավորն ասում ա. — Լա՛վ, դուք լայել եք ախչկանս տանելու, պետք ա իմ ախչկա ամարաթը վեր ունիք, ուսներուդ տանիք:

Էդ վախտը Թոռչու տղեն հարցնում ա Իմաստունին, թե թգավորը էլ բան ունի ասելո՞ւ, թե չէ: Իմաստունն ասում ա, որ թգավորի մեղը կտրած ա. էս գշեր խոսում են, որ վաղը են կուռը ծեգի թե չէ, ախչկանը մեզ տան:

Էգսի օրը Ջղցքաբեր ժաժ տվող իգիթնին ուսներուն տակն են տալիս, որ ախչկա ամարաթը վեր ունին, տանին, թգավորը թողնում չի: Ասում ա,— Ես դաբուլ եմ, վե կալեք, տարեք ախչկանս, ոնց որ դուք ուզեք:

Արանք վեր են կալնում թգավորի ախչկանն ու էլեդ ճամփա ընգնում:

Իմաստունն իր տեղն ա մնում, Ջուր ծծողն՝ իր տեղը, Ալիք ուտողը իրանը, Ջղացաքար ժաժ տվողնին՝ իրանց տեղը: Թոռչու տղեն թգավորի Փահլևանի ու Շան հետ առնում ա թգավորի հրսնացուն ու գալի թգավորի կուշտը:

Թգավորը էնենց գիդենալիս ա ըլում, թե Թոռչու տղեն էլեդ գալու չէ, գոռով նրա կնգանը տարած ա ըլում իր ամարաթը: Եր լսում ա, թե նա գալիս ա, հրաման ա տալիս, որ բաղնաի ջուրը դեղեն ու նրան բաղնիսը տանին՝ ճամփու կեղտը լվանալու:

Թոռչու տղեն բանը գլխի ա ըլում, ասում ա, որ թգավորը իր հետ բաղնիս գա, մենակ վախում ա, ոչովի էլ մավա չի գնում, որ հետը բաղնիս տանի:

Թգավորն ու Թոռչու տղեն բաղնիս են մտնում թե չէ, Թոռչու տղեն մատիցը հանում ա թգավորական մատնուքն ու ջուրը գծում. էն սհաթին դեղը ջրի երեսն ա անում:

Թոռչու տղեն թգավորին բոթում ա, ջուրը գծում. տեսնում ա, որ նա ուռավ ու տրաքվեց: Ինքը՝ հագնում ա թգավորի շորերն ու նստում նրա թախտին: Ինքը թգավոր ա դառնում, իր կնիկը՝ թգավորակին: Հետի ախչկանը տալիս ա իր Փահլևանին, մորն էլ կանչում իր կուշտը: Օխտն օր ու օխտն գշեր հրսանիք են անում, ուրախանում...

Ասծանե իրեք խնձոր կաթի, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ ալամ աշխարհին: